

Ամեն բան ավելի լավը դարձնելու ակումբ

Ջոզին գիտեր, թե ինչպես կարող էր հետևել Հիսուս Քրիստոսի օրինակին:

ՋՈԼԻՆ ԲՐԱՈՒՆ
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Ջոզին իր զարմիկի՝ Էշլինի հետ նստել էր իրենց տան կողքի ծառի տակ:

«Կցանկանայի, որ ինչ-որ զվարճալի միջոցով կարողանայինք գումար վաստակել»,- ասաց Ջոզին:

«Միգուցե մենք կարողանայինք գումար վաստակել մարդկանց համար որևէ բան անելով»,- ասաց Էշլինը:

«Իսկ եթե մենք ակումբ բացենք»: Ջոզին ոգևորված վեր թռավ տեղից: «Օրինակ՝ ընտանի կենդանիների դայակության ակումբ կամ շներին զբոսանքի տանելու ակումբ»:

«Մենք կարող ենք տարբեր բաներ անել»,- ասաց Էշլինը: «Մարդիկ միշտ օգնության կարիք ունեն: Եվ նրանք կվճարեն մեզ»:

Էշլինը ճիշտ էր: Ամեն օր Ջոզին տեսնում էր մարդկանց, ովքեր ունեին օգնության կարիք:

Հանկարծ մեկ այլ միտք ծագեց Ջոզիի գլխում: Նա ջերմ զգացումներ ունեցավ: Դա հիշեցրեց նրան անցյալ տարի իր մկրտության մասին: Նա խոստացել էր միշտ հիշել Հիսուսին և հետևել Նրա օրինակին: Նա գիտեր, թե ինչպես անել դա:

«Ի՞նչ կլինի, եթե մենք ակումբ ունենանք, որն անվճար է օգնում մարդկանց»,- հարցրեց Ջոզին: Ջերմ զգացումն ավելի ուժեղացավ:

Էշլինի աչքերն ավելի էին մեծանում: «Դա զվարճալի կլինի»,- ասաց նա: «Մենք կարող ենք օգնել մարդկանց դպրոցում և եկեղեցում, գրեթե ամենուր»:

«Մենք կարող ենք անվանել այն Ամեն բան ավելի լավը դարձնելու ակումբ»,- ասաց Ջոզին: «Արի սկսենք վաղը դպրոցից»:

Հաջորդ օրը դասամիջոցին Էշլինն ու Ջոզին վազեցին դեպի խաղահրապարակի եզրը:

«Տեսնո՞ւմ ես որևէ մեկին, ում կարող ենք օգնել»: Էշլինը կանգնեց ոտքի ծայրերին և նայեց դեպի խորդուբորդ ծիածանի սահարանին:

«Դեռ ոչ»: Ջոզին զննեց կապիկների ձողերը և ճոճանակները: Երեխաները սահում և ճոճվում էին: Նրանք ցատկում էին գնդակների վրա և խաղում էին ցատկապարաններով: Կարծես թե ոչ ոք օգնության կարիք չուներ: Բոլորն էլ կարծես ընկերներ ունեին: Ապա նա նկատեց մի փոքրիկ աղջկա, ով միայնակ կանգնած էր ցատկապարանը ձեռքին:

Ջոզին արագ բռնեց Էշլինի ձեռքը: «Նայիր այն կողմ»:

ԱԿԱՆԿՈՒՄ ՏԱՆԵՍՈՒԹՅԱՆ

Ջոզին և Էշլինը ցատկապարաններ գտան և գնացին աղջկա մոտ:

«Ողջույն: Ես Ջոզին եմ»:

«Իսկ ես Էշլինն եմ: Ի՞նչ է քո անունը»:

Աղջիկը զարմացած տեսք ուներ: «Ես Լեսլին եմ»:

«Ցանկանո՞ւմ ես խաղալ մեզ հետ»: Ջոզին բռնել էր ցատկապարանը:

Լեսլին ժպտաց: «Այո»:

Էշլինն ու Ջոզին Լեսլիին պարանով ցատկելու որոշ նոր եղանակներ սովորեցրեցին: Երբ զանգը հնչեց, նրանք հրաժեշտ տվեցին միմյանց: Ջոզին ներքուստ լավ զգաց իրեն: Նա գիտեր, որ դա Սուրբ Հոգին էր:

Դրանից հետո, երբ Ջոզին և Էշլինը տեսնում էին Լեսլիին միջանցքում, նրանք ողջունում էին նրան:

Ջոզին և Էշլինը փնտրում էին ավելի շատ մարդկանց՝ օգնելու համար: Երբեմն նրանք հաճելի բաներ էին ասում մարդկանց և փորձում ուրախացնել նրանց: Երբեմն նրանք հրավիրում էին երեխաներին խաղալ իրենց հետ:

Մի օր Ջոզին ժպտաց մի տղայի դպրոցի բակում: «Ինձ դուր է գալիս դինոզավրով քո շապիկը»,- ասաց նա:

Տղան ժպտաց և նայեց վերնաշապիկին: «Շնորհակալություն»:

Երբ Ջոզին նստեց, նա հասկացավ, որ չէր էլ մտածել դա անել ակումբի համար: Նա պարզապես արեց դա:

Ջոզին մտածում էր այն բոլոր ընկերների մասին, որոնց ձեռք էր բերել այն պահից սկսած, երբ նա և Էշլինը բացեցին իրենց ակումբը: Ջոզիին իսկապես դուր եկավ մարդկանց օգնելը: Դա մղում էր նրան ավելի լավ բաներ անել ուրիշների համար: Ամեն բան ավելի լավը դարձնելու ակումբը *նրան* ավելի լավն էր դարձնում: Եվ դա հրաշալի զգացողություն էր: ●